

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԸՆՈՐՀԱՌՐԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆՊԻՆԵՅ

Ուրբաթ, 6 Յունուար 2023-ին, յետ Սուրբ Եւ Ամմահ Պատարագին, Բերիոյ Զայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Քրիստոսի Սուրբ Ծննդեան Եւ Աստուածայայտութեան տօնին առիթով, շնորհաւորական այցելութիւններ ընդունեց Ազգ. Առաջնորդարանի



դահլիճէն ներս, ներկայութեամբ՝ Բերիոյ Զայոց Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի, Ազգ. Վարչութեան Եւ Կրօնական Ժողովի անդամներուն, ինչպէս նաեւ Սուրբիոյ Խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէիսեանի:

Սրբազան հօր այցելեցին Եւ Սուրբիոյ Նախագահին կողմէ շնորհաւորանք փոխանցեցին պետական բարձրաստիճան պատասխանատուներ, այցելութիւն տունին նաեւ Սուրբիոյ Խորհրդարանի երեսփոխաններ, ապահովական Եւ կրթական բարձրաստիճան պատասխանատուներ, Իրանի Իսլամական Զանրապետութեան Զալէպի գլխաւոր հիւպատոսը, Զայաստա-



նի Զանրապետութեան Զալէպի գլխաւոր հիւպատոսը, հայ Եւ արաբ կուսակցութիւններու ներկայացուցիչներ, Զալէպի մուֆթին, կրօնական կալուածներու տնօրէնը, իսլամ կրօնաւորներ, քոյր յարանուանութիւններու համայնքապետեր Եւ հոգեւորականներ, ինչպէս նաեւ Ազգային մարմիններու, մարզական, մշակութային Եւ բարեսիրական միութիւններու Եւ հաստատութիւններու ներկայացուցիչներ, եկեղեցիներու թաղական խորհուրդներ Եւ դպրաց դասեր:

Սրբազան Զայոց հաստատեց սուրբահայութեան կառուցածութիւնը Սուրբական Զայրենիքին Եւ անոր ղեկավարութեան, մաղթելով, որ Ս. Ծննդեան տօնը աստուածային օրհնութիւն Եւ խաղաղութիւն պարգեւէ ողջ աշխարհին, յատկապէս՝ Սուրբական Զայրենիքին:

ՀՅՂ ԲԻՐՈՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐՉՈՐԻ ՄԻՋԱՆՅՔԻ ՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ճաւալապաշտական նկրտումները բարարելու Անըրպէյճանի յանցաւոր քաղաքականութիւնը շարունակում է:

Զեռահար նպատակներ հետապնդող «բնապահպանական» կազմակերպութեամբ սաղորանքի հետեւանքով 2022 թուականի Դեկտեմբերի 12-ից փակ է Արցախին ու Զայաստանը իրար կապող միակ ճանապարհը՝ Բերձորի միջանցքը: Փաստօրէն Արցախը գտնուում է ամբողջական շրջափակման մէջ Եւ շուրջ 120.000 հայ բնակչութիւնը կանգնած է մարդասիրական աղէտի առջեւ:

Զերթական անգամ Ատրպէյճանը շինծու պատրուակով կոպտօրէն ոտնահարում է 2020 թուականի Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեամբ ձեռք բերուած պայմանաւորութիւնները՝ առանց լուրջ հակազդեցութեան:



ՀՅՂ ԲԻՐՈ
 5 Յունուար 2023

Շար.՝ 1ք 3 ➤

ՄՓԻՒՌԻ ՏԱՐԻ (Բ.) ԻՆՔՆԱՔՆՆՈՒԹԵՆԷ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ 2023

Պ Ա Տ Գ Ա Մ
 Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
 ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեմակալ Առաջնորդներուն, հոգեւոր դասուն, Ազգային իշխանութեանց Եւ մեր ժողովուրդի գաւակներուն.

2023 տարուան սեմին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն քրիստոնէական սիրով ու հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Ազգ. Ընդհանուր Ժողովը, Ազգ. Կեդրոնական Վար-

ՄՓԻՒՌԻ ՏԱՐԻ
 (Բ.)
 ԻՆՔՆԱՔՆՆՈՒԹԵՆԷ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
 2023



Պ Ա Տ Գ Ա Մ
 Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
 ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

չութեան Կրօնական ու Քաղաքական ժողովները, Միաբանութիւնը, Թեմակալ Առաջնորդներն ու Ազգ. իշխանութիւնները, մեր կեանքէն ներս գործող քաղաքական, կրթական, մշակութային, բարեսիրական Եւ համայնքային միութիւններն ու կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ մեր ժողովուրդի սիրելի գաւակները: Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ բացուող Նոր Տարին մեր անհատական, ընտանեկան Եւ ազգային կեանքին մէջ լեցուի առողջութեան, յաջողութեան Եւ երջանկութեան երկնային բարիքներով:

Ինչպէս ծանօթ է մեր ժողովուրդի գաւակներուն, անցող տարին, 2022-ը, Զայրապետական Զոհակազրով յայտարարեցինք «Սփիւռքի Տարի»: Անդրադառնալով Սփիւռքի պարզած ներկայ վիճակին, Եւ այն հիմնական դժուր դապատճառներուն, որոնք Մեզ մղեցին 2022 տարին հռչակելու Սփիւռքի Տարի, Զոհակազրին մէջ հետեւեալ հաստատումը կատարեցինք. -

«*Զայօրէն մաշումի եկթակայ Սփիւռքը՝ տեղ մը անորոշութեան ալիքներու մէջ կ'օրօրուի, այլ տեղ՝ փոթորիկներու դեմ կը պայքարի. տեղ մը՝ նոր ինքնութեան փնտռողի մէջ է, այլ տեղ՝ տեղայնացումի արագ ընթացքին մէջ է: Զեռեւաբար, այս կացութեան դիմաց Սփիւռքի վերակազմակերպումը ու վերակենսաւորումը հրամայական անհրաժեշտութիւն է: Այս բազմատարած ու բազմերես ծրագիրը իր գործնական ընթացքը կրնայ առնել նախ Սփիւռքի ինքնաքննութեամբ, ինքնարժեւորումով Եւ ազգի համայնական կեանքին մէջ անոր իւրայատուկ տեղին ու դերին յստակեցումով: Այս հսկայածաւալ աշխատանքին հարկ է լծուիլ այսօր. վաղը կրնայ ո՛րչ ըլլալ՝ աշխարհի արմատական ու արագ փոփոխութիւններու յորձանուտին մէջ ապրող Սփիւռքին համար»: Ապա, մեկնելով Սփիւռքի պարզած անորոշ ու մտահոգի կացութենէն, շեշտեցինք թէ՝ «Անորոշութիւններով ու տագնապներով լեցուն Սփիւռքի ներկայ իրավիճակը, մեր եկեղեցին, մեր ղեկավար մարմինները ու մտաւորականները պէտք է մղէ՝ իրապաշտ ոգիով, պատասխանատու մօտեցումով ու համապարփակ տեսլականով տագնապելու, մտածելու, քննելու, խորհրդակցելու Եւ մանաւանդ՝ Սփիւռքի ներկան վերակազմակերպելու ու անոր ապագան հունաւորող ճիշդ ճամբաներ Եւ ազգու միջոցներ որոնելու»:*

Արդարեւ, անցող տարուան ընթացքին Սփիւռքին ներկայ գոյավիճակին ու դիմագրաւած մարտահրաւերներուն շուրջ՝ յօդուածներու, ուսումնասիրութիւններու, դասախօսութիւններու ու սեմինարներու ճամբով ար-

Շար.՝ 1ք 4 ➤

Խմբագրական

ԹՈՒՐՔ-ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐՈՒ ԶԱՄԱԴՐՈՒՄԸ

Ստեփանակերտ-Գորիս մայրուղիի փակումը թուրք-ատրպեյեյանական համադրուած քայլերու արդիւնք է:

Թուրք-ատրպեյեյանական ռազմաքաղաքական ճնշումը կը շարունակուի մէկ կողմէ Արցախի վրայ՝ արցախահայութիւնը շրջափակելու, անոր գոյութեան սպառնալու ու Արցախը ստիպողաբար Ատրպեյեյանի կազմին մէջ պահելու, միւս կողմէ Զայաստանի վրայ՝ Զայաստանի հետ Թուրքիոյ օդային թէ ցամաքային սահմանը բանալով Արցախի նկատմամբ Զայաստանի քայլերը զսպելու:

Այլ առումով, Թուրքիա կը փորձէ ճանապարհներու ապաշրջափակման տեսակետը առաջ մղելով ռուսական կողմին եւս առաւելութիւններ հրամցել, արեւմուտքի Ռուսիոյ տընտեսական շրջափակման արդիւնքը Պաքու-Զայաստան-Թուրքիա ապաշրջափակուած ճանապարհներու այլընտրանքով մեղմացելու՝ ռուսական ապրանքներուն դիմաց այս ճանապարհները բաց համարելու:

Զեռու չէ, որ Ստեփանակերտ-Գորիս մայրուղիի վերաբացման դիմաց Ատրպեյեյան պահանջէ Չանգեզուրի միջանցքին տրամադրումը:

Զայաստանի յարաբերութիւններու պահպանումը ոչ միայն արեւմուտքի, այլեւ տարածաշրջանի ուժային կեդրոններու հետ, կարելոր է, զարգացնելու իր պաշտպանողական համակարգը եւ զսպելու թուրք-ատրպեյեյանական յարձակողական նկրտումները, որոնք որեւէ պատրուակով կրնան պատերազմի հրահրման դուռ բանալ ու Զայաստանի տարածքային ամբողջականութեան սպառնալ:

Թուրքիոյ լարախաղաց քաղաքականութիւնը նորութիւն չէ: Միջին Արեւելքի մէջ ան բարիդրացիական ու առեւտրական մերձեցումներ օգտագործելով պատերազմ հրահրեց ու բռնակազրաւեց սուրիական հողեր՝ իր այս քայլերով ռազմաքաղաքական եւ տնտեսական շահերու զուգահեռներ գծելով ե՛ւ Ռուսիոյ, ե՛ւ Արեւմուտքի հետ:

Նոյնը կը փորձէ ընել այսօր Զարաւային Կովկասի մէջ:

Ուստի Զայաստան արեւելումներու կտրուկ փոփոխութիւններէ հարկ է որ զգուշանայ, որովհետեւ արեւմտեան երկիրներու հեռահար ծրագիրներուն մէջ գործուն դերակատարութիւն ունին ե՛ւ Թուրքիան՝ որպէս Ռուսիան եւ Իրանը փոխարինող ուժ աստիճանաբար դրսեւորուիլ փորձելով տարածաշրջանին մէջ, թէ՛ Ատրպեյեյանը՝ իր քարիւղի հանքերուն շահով կաշառելով արեւմուտքը:

«Գ.»

-Սուրիոյ արտաքին գործոց նախարարի օգնական դոկտ. Այման Սաուսան այցելեց Իրանի մայրաքաղաք Թեհրան, ուր խորհրդակցութիւններ պիտի ունենայ իրանցի շարք մը պատասխանատուներու հետ՝ Սուրիա-Իրան յարաբերութիւններու, տարածաշրջանային հարցերու եւ երկու երկիրները հետաքրքրող օրակարգերու շուրջ:



Դոկտ. Սաուսանն ու իրեն ընկերակցող պատուիրակութիւնը դիմաւորուեցան Իրանի Արտաքին Գործոց Նախարարութեան արեւմտեան Ասիոյ հարցերու ղեկավար Շահ Զուէյնիին, Թեհրանի մէջ Սուրիոյ դեսպանին եւ շարք մը իրանցի պատասխանատուներու կողմէ:

Արտաքին գործոց նախարարի օգնականին կ'ընկերակցէին նախարարութեան եւրասիական հարցերու վարչական տնօրէն Քուսէյ Մուսթաֆան եւ նախարարի գրասենեակի խորհրդատու Իհասա Զամետը:

-Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, որուն մէջ բարձր գնահատեց Չինաստանի Զանրապետութեան պատկաճեցնող ժառանգ նախագիշտանալու գծով որդեգրած քայլերը: Նախարարութիւնը ակնարկեց. «Սուրիոյ Զանրապետութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ Չինաստանի բարեկամ Զանրապետութեան՝ Սուրիոյ թէ որջ աշխարհին մէջ պատկաճեցնող տարածման շրջանին տրամադրած բժշկական օժանդակութիւններուն համար, որոնք նպաստեցին վարակուած պարագաներու բուժման, ինչպէս նաեւ պատուաստներու ապահովման»:



-Սուրիոյ Դեղագործներու Արհմիութիւնը յայտնեց, որ Սուրիոյ մէջ ամիսէ մը ի վեր դեղերու տագնապ առկայ է: Շաբաթ մը աւելի դեղարաններու պահեստանոցներու դեղերու ներածումը դադարեց եւ, հետեւաբար պահեստանոցները գրեթէ պարապ են: Միւս կողմէ գործարանները դադարեցնելու դեղեր արտադրել, որովհետեւ իւրաքանչիւր գործարան ահաւոր վնասներ կրած է տնտեսական վատ պայմաններուն եւ դեղերու գիններու անկայունութեան հետեւանքով:



Արհմիութիւնը շեշտեց, որ այս պայմաններուն մէջ գործարանները չեն կրնար իրենց աշխատանքը շարունակել եւ դեղորայք արտադրել: Երեխաներու կաթի ապահովման անդրադառնալով, Արհմիութիւնը յայտնեց, որ յառաջիկայ շաբթուան ընթացքին անոնք պիտի ապահովուին նոր գիներով եւ որոշ քանակով, մինչեւ որ ապսպրուած յաջորդ քանակը հասնի:

-Թրքական ուժերուն եւ անոնց ենթակայ գինեալ ահաբեկչական խըմբաւորումներուն աւելի քան 90 օրէ ի վեր Զասիէի «Ալուք» ջրամուղ կայանի աշխատանքը դադարեցնելուն եւ աւելի քան միլիոն քաղաքացի ջրագուրկ պահելուն համար, Զասիէի ժողովուրդը կոչ ուղղեց միջազգային կազմակերպութիւններուն եւ ՄԱԿ-ի հաստատութիւններուն, անմիջապէս միջամտելու եւ վերջ տալու Զասիէի ժողովուրդին դէմ թրքական իրարայայջողո՞ղո՞ղ ոճրագործութիւններուն:



ՇՆՈՐՅԱԿԱԼԻՔ

Պօղիկեան եւ Չիլմբօշեան ընտանիքները շնորհակալութիւն կը յայտնեն.
-Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեանին
-Բերիոյ Թեմի Կաթողիկէ Զայոց Առաջնորդ Արիի. Տէր Պետրոս Արք. Միրիաթեանին
-Զայ Աւետարանական Զամայնքապետ Վերապատուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեանին
-ԶԶ Զալէպի Գլխաւոր Զիւպատութեան խորհրդական, հիւպատոս Բաբգէն Պատալեանին
-Քրիստոնէայ համայնքապետներուն եւ անոնց ներկայացուցիչներուն
-Զալէպահայ երեք կազմակերպութիւններու, Ազգ. իշխանութեան, միութիւններու, կրթական հաստատութիւններու ներկայացուցիչներուն, հեռու եւ մօտիկ հարազատներուն եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով կամ առցանց գրութեամբ մասնակից դարձան իրենց հօր եւ մեծօր՝



Զանգուցեալ ԳԱՐԻԷԼ ՊՕՂԻԿԵԱՆԻ

մահուան սուգին, որ պատահեցաւ Ուրբաթ, 24 Դեկտեմբեր 2022-ին, Զալէպ:
Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Լուրեր Հայաստանի

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ԱՐՅԱՆՏՅՈՒՆԵՐՈՒ ԻՐԱԽՈՒՆՔՆԵՐՈՒ ԴԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԴԱՐ ԴԱՅԱՆՑԸ ԴԻՏԻ ՅԱՐՁԱՆԱԿԷ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԶԱՆՔԵՐՈՎ»

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտությունն տոնին առիթով մատուցուած պատարագի իր պատգամին մէջ Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը Արցախին սատարելու եւ անկախ պետականութիւնը չվտանգելու կոչ ուղղեց:



«Տեւական ժամանակ արգելափակուած է Արցախը Հայաստանի հետ կապող ճանապարհը, ինչ որ յանգեցուցած է մարդասիրական աղետի: Զօրանանք հայրենիքի սիրով եւ ամեն կարելի հնարաւորութեամբ սատարենք Արցախի մէջ եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ դժուարութիւններ կրող մեր քոյրերուն ու եղբայրներուն», ըսաւ վեհափառ հայրապետը:

Դիմելով արդէն 26 օրէ ի վեր շրջափակման մէջ գտնուող արցախցիներուն՝ վեհափառ հայրապետը յայտնեց. «Ձեր քաջ նախնեաց փառաւոր օրինակով հաստատուն ու աննկուն մնացէք հայրենի հողին մէջ ապրելու եւ արարելու վճռականութեան մէջ: Մեր սուրբ եկեղեցին աշխարհասփիւռ իր թեմերով ձեզի հետ է, աջակից ու զօրակից ձեզի: Ձեր հիմնարար իրաւունքներուն պաշտպանութեան արդար պահանջը պիտի յաղթանակէ համայն հայութեան ջանքերով եւ միջազգային հանրութեան սատարումով»:

ԱՐՅԱՆՏ ԶԱՆՐԱԴԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍԵՋՈՒԹԻՒՆ «ԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒՄԻՉՈՅՆԵՐԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՅԻՆ ԱՐՅԱՆՏ ԵՐԶԱՓԱԿԱՆ ՓԱՍՏԸ»

Ատրպեյճանական լրատուամիջոցները վերահաստատեցին Արցախի շրջափակման փաստը: Այս մասին յայտնած են Արցախի Հանրապետութեան Դատախազութիւնէն: 9 Յունուար 2023-ի Ատրպեյճանի տեղեկատուաքարոզչական շահերը սպասարկող լրատուամիջոցներ տեղեկութիւն հրապարակած են (<https://ru.oxu.az/politics/681869>, https://media.az/.../blokada-karabaha-po-armyanski-sotni...) յայտնելով, որ Ստեփանակերտ-Գորիս ինքնաշարժային ճամբուն արգելափակման 27 օրուան ընթացքին երկու ուղղութիւններով իրականացուած է 370 այլատեսակ երթելակային միջոցներու տեղաշարժ, որմէ 330-ը՝ ռուս խաղաղապահներու կողմէ, 31-ը՝ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտէին (շտապ օգնութեան մեքենաներ), իսկ շտապ օգնութեան 3 մեքենաները՝ «Արցախի բնակիչներու կողմէ»:



Յօդուածին հեղինակը փորձած է ցոյց տալ, որ իրականութեան մէջ Արցախը շրջափակման մէջ չէ, թէեւ բերուած տուեալները ակնյայտօրէն հակառակը ցոյց կու տան: Ատրպեյճանական թեք լրագրողները լրատուութիւնը կատարելով մինչեւ Արցախը Հայաստանի հետ կապող միակ՝ Ստեփանակերտ-Գորիս ինքնաշարժային ճամբուն արգելափակումը, Նոյեմբեր 2022-ի ցուցանիշներուն համաձայն, Հայաստանի Հանրապետութենէն Արցախ մատակարարուած էր օրական 380-400 թոն սննդամթերք եւ հանրային կարիքներու համար նախատեսուած այլ ապրանքատեսակներ (27 օրուան մէջ՝ 10.260-10.800 թոն), Լաչինի միջանցքէն մէկ ուղղութեամբ՝ Հայաստանէն Արցախ մեկնած էր օրական միջին հաշուով 454 մեքենայ (27 օրուան մէջ՝ 12.258), աւելի քան 1.200 մարդ (27 օրուան մէջ՝ 32.400): Յատկանշական է, որ յիշեալ ցուցանիշները փոքր են ոչ միայն 2020-ի 44-օրեայ պատերազմին նախորդող ժամանակահատուածին, այլեւ 120.000-նոց բնակչութեան միջին մակարդակի բարեկեցութիւնը ապահովելու համար անհրաժեշտ պահանջարկի համեմատութեամբ: Ատրպեյճանական լրատուամիջոցները վերոյիշեալ հրապարակումով հաստատած են նաեւ, որ 27 օրէ ի վեր Արցախի Հանրապետութեան բնակիչները գրկուած են միջանցքէն տեղաշարժելու եւ Հայաստանի Հանրապետութեան հետ կապի կարելիութենէն, միջանցքին մէջ երթելէ կամ են բացառապէս ռուս խաղաղապահները եւ Կարմիր Խաչ Միջազգային Կազմակերպութեան ներկայացուցիչները: Այսպիսով, վերոյիշեալ վիճակագրական տուեալները եւ փաստարկները բաւական խօսուն ու պատկերաւոր տեսքով արտացոլացուցած են այն ողջ իրականութիւնը, որ ներկայիս կը տիրէ Արցախի մէջ, իսկ Ատրպեյճան միջազգային հանրութենէն այս իրականութիւնը թաքցնելու համար ջանք ու եռանդ չի խնայեր:

ԿՈՒՏԵՐԵՆ ԼԱԳՆԻ ՄԻԶԱՆՅՔԷՆ ԱԶԱՏ ՈՒ ԱՆՎՏԱՆԳ ՏԵՂԱՇԱՐԺ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿՈՉ ԿՈՒՂԸ ԱՏՐՊԷՅՃԱՆԻՆ

Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) գլխաւոր քարտուղար Անթոնիօ Կուտերե՛ն վերահաստատած է իր կոչը՝ ապահովելու Լաչինի միջանցքէն ազատ ու անվտանգ տեղաշարժը, այս մասին «Արմենփրէս»-ին ըսած է անոր խօսնակ Սթեֆան Տիւթարիքը:



«Գլխաւոր քարտուղարը ներկայ իրավիճակին մասին իր մտահոգութիւնները յայտնած է 14 Նոյեմբեր 2022-ի իր յայտարարութեան մէջ: Այս մտահոգութիւնները Քարտուղարութեան կողմէն բարձրաձայնուած են նաեւ 20 Նոյեմբեր 2022-ին Հայաստանի հայցով հրաւիրուած Անվտանգութեան Խորհուրդի արտակարգ նիստին ընթացքին: Գլխաւոր քարտուղարը վերահաստատած է իր կոչերը՝ մեղմացնելու լարուածութիւնը եւ ապահովելու միջանցքէն ազատ ու անվտանգ տեղաշարժը՝ համաձայն ձեռք բերուած համաձայնութիւններուն: Ան իր աջակցութիւնը յայտնած է միջնորդական ջանքերուն», ըսած է Տիւթարիք՝ անդրադառնալով Ատրպեյճանի կողմէն Լաչինի միջանցքը արդէն մէկ ամիս փակ պահելու իրողութեան, որուն հետեւանքով մարդկային ճգնաժամ սկսած է Արցախի մէջ, ուր մօտաւոր 120 հազար բնակիչներ յայտնուած են շրջափակման մէջ:

«ՄԱԿ-ի ներկայացուցչութիւնները Հայաստանի եւ Ատրպեյճանի մէջ կը շարունակեն բաց պահել կապը իշխանութիւններուն եւ միջազգային կազմակերպութիւններուն հետ ու պատրաստ են արձագանգելու, եթէ ըլլայ դիմում եւ պայմանները թոյլատրեն», յայտնած է ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարին խօսնակը:

ՆՅՊԲԻՐՈՅԻ... Սկիզբ՝ էջ 1

Եան արժանանալու Հայաստանի եւ Ռուսաստանի կողմից:
Ատրպեյճանի այս սանձարձակ վարքագիծը, ինչպէս միշտ բացայայտ կերպով հովանաւորում է Թուրքիայի ռազմաքաղաքական դեկաւարութեան կողմից: Թուրք-ատրպեյճանական դաշինքի նպատակները պարզ են՝ հայաթափել Արցախը, մասնատել եւ ինքնիշխանութիւնից գրկել Հայաստանի Հանրապետութեանը:
Անցնող շաբաթների ընթացքում արցախահայութիւնը հերթական անգամ ի ցոյց դրեց իր անկոտորում կամքն ու ոգին եւ հակառակ բոլոր դժուարութիւններին շարունակում է տեր կանգնել իր ինքնիշխանութեանը: Տարբեր միջազգային կառոյցների եւ ատեանների, բազմաթիւ երկրների պետական հաստատութիւնների եւ պաշտօնատար անձանց հասցեական դատապարտումները, ամանձին գործիչների յայտարարութիւնները խիստ կարեւոր եւ գնահատելի նկատելով հանդերձ, կ'անդրադառնանք, որ դրանք բաւարար չեն Ատրպեյճանի անմարդկային գործելակերպը կանխելու համար:
ՀՀ Դաշնակցութիւնն իր կազմակերպական միաւորների, Հայ Դատի գրասենեակների եւ յանձնախմբերի, ուղեկից միութիւնների եւ քոյր կառոյցների միջոցով կարողացել է Նոյեմբերի 12-ից դիւանագիտական, քաղաքական, տեղեկատուական-քարոզչական եւ մարդասիրական գետնի վրայ հսկայածաւալ աշխատանքներ իրականացնել եւ այսուհետ եւս արուելու է առաւելագոյնը արցախահայութեանը զօրավիճակ կանգնելու եւ Արցախի իրաւունքները պաշտպանելու համար:
Արցախը հայկական պահելու հարցում բոլորս անելիք ունենք: Դժուարին ու ճակատագրական զարգացումները դեռ անքննելի են: Ինքնակազմակերպուելու, համազգային ջանքերով մեր իրաւունքներին տեր կանգնելու ու մեր ազգային շահերը պաշտպանելու մարտահրաւերների առջեւ ենք:
Առ այդ, ՀՀ Բիւրօն անհրաժեշտ է համարում Արցախի իշխանութիւնների հետ անմիջականօրէն աշխատող, համահայկական ցանցային ներուժը կազմակերպող եւ համակարգող մարմին առաջացնելու շուրջ գործնական քայլերի ձեռնարկումը:
Միաժամանակ, մէկ անգամ եւս, հարկ ենք համարում Հայաստանի օրուայ իշխանութիւններին յորդորել գերծ մնալու Հայաստանի եւ Արցախի շահերը վտանգող, ապաշնորհ ու անհեռատես քաղաքականութիւնից: Հայաստանը չի կարող հրաժարուել Արցախի անվտանգութեան երաշխաւորի յանձնառութիւնից: Որեւէ պարագայում Արցախի ինքնիշխանութիւնը, արցախահայութեան ինքնորոշման իրաւունքը չեն կարող սակարկման առարկայ լինել: Ցանկացած եղբայր կ'արժանանայ հակազդեցութեան՝ բոլոր հնարաւոր ձեւերով եւ եղանակներով:

«Ս. ՃՆՆԴԵԱՆ ԳԻՂԱԿ»-Ը ՀԱԼԷՊԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՅՈՅՍ ՆԵՐՇՆՉԵՑ

Այս տարի Հայկաի ժողովուրդը իւրայատուկ ձեւով դիմաւորեց Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը: Մութ եւ պաղ քաղաքին մէջ լուսաւոր եւ տաքուկ տեղ մը դարձաւ «Ծննդեան Գիւղակ» նախաձեռնութեան վայրը, ճիւղտէտի «Ալ-Հաթապ» հրապարակը: Գիւղակը կը պարունակէր տօնական ցուցահանդես-վաճառքի յատկացուած փոքր տնակներ, որոնցմէ իւրաքանչիւրը,



որպէս տաղաւար, այցելուներուն կը ներկայացներ զարդեղէն, ուտեստեղէն, ձեռագործ աշխատանքներ եւ այլն: Տեղացի արաբ քրիստոնէայ համայնքներու ներկայացուցիչներուն կողքին, տաղաւարներ վստահուած էին նաեւ հայ համայնքի անդամներու եւ միութիւններու, ինչպէս օրինակ՝ Սուրիահայ Օգնութեան Խաչին, Կիլիկեան Միութեան Տիկնանց Յանձնախումբին, անհատ հայ ձեռներեցներու եւ այլն:

Հրապարակի մեծ տօնածառին կողքին գետեղուած էր մտւոր մը, որ արուեստի ընտիր գործ մըն էր, պատրաստուած շերտաւոր թուղթերով (cartonello-papier mashe), որուն արձանները (Յիսուս մանուկը, Մարիամ Աստուծածաճին ու Հայր Յովսէփը) քանդակած էր արուեստագետ Վարդգէս Պարտումեանը, իսկ մտւորի կազմաւորումը՝ արուեստագետ Նիկոլայ Պատաուին: Արուեստի գեղեցիկ ու խորհրդաւոր պատկեր մը ներկայացուած էր կարծ ժամանակուան մը մէջ պատրաստուած:



տուածածինն ու Հայր Յովսէփը) քանդակած էր արուեստագետ Վարդգէս Պարտումեանը, իսկ մտւորի կազմաւորումը՝ արուեստագետ Նիկոլայ Պատաուին: Արուեստի գեղեցիկ ու խորհրդաւոր պատկեր մը ներկայացուած էր կարծ ժամանակուան մը մէջ պատրաստուած:



Հրապարակին մէջ կար նաեւ մեծ վրան մը, որ կը ծառայէր որպէս հանդիսասրահ: Այնտեղ օրական դրութեամբ համերգներ տեղի կ'ունենային: Համերգներուն մասնակցեցան նաեւ Հայկական խումբեր, ինչպէս՝ ՀԵԸ-ի «Սպենդիարեան» երգչախումբը, Համագգայինի «Չուարթնոց» երգչախումբը, Հայ Աւետարանական Բեթել Երկրորդ վարժարանի երգչախումբը եւ անհատ երգիչներ:

Թուրքիոյ նուրջ

ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԸ ԷՐՏՈՂԱՆԻ ՀՐԱԷՐՈՎ ԹՈՒՐԲԻԱ Կ'ԱՅՅԵԼԷ

Իրանի նախագահ Իպրահիմ Ռայիսիին Թուրքիա կ'այցելէ: Իրանական IRNA գործակալութեան համաձայն, աս տեղեկութիւնը փոխանցած է Իրանի Արտաքին Գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Նասեր Քանանին:



Իրանի նախագահը Թուրքիա այցելի այցելէ Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի հրաւերով:

Քանանի իր խօսքին մէջ ընդգծած է, որ Իրանի եւ Թուրքիոյ յարաբերութիւնները բարձրագոյն մակարդակի վրայ են:

ԹՈՒՐԲԻԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԻՆ ՎՐԱՅ ՈՒՃԱՄԱԿԱՅԱՆ ԿԸ ԿԱՌՈՒՅԷ

Թուրքիա Հայաստանի հետ սահմանին մօտ՝ Արարատ լեռան վրայ միօրինականացուած ու բազմաթիւ նպատակներու համար օգտագործուող ռազմակայան կը կառուցէ: «Արմէնփրես»-ի համաձայն, այս տեղեկութիւնը




յայտնած են թրքական լրատուամիջոցները:

Ծովուն մակերեսէն 2100 մէթր բարձրութեան վրայ գըտնուող ռազմակայանը յազելցուած պիտի ըլլայ գիշերային տեսանելիութեան տեսախցիկներու ժամանակակից համակարգերով եւ ինքնակառավարող զէնքերով:

Կ'արձանագրուի, որ Թուրքիա ռազմակայանը կը կառուցէ «ահաբեկչութեան դէմ պայքարելու նպատակով»:

«Չուարթնոց» երգչախումբը ելոյթ ունեցաւ Չորեքշաբթի, 4 Յունուար 2023-ին, երեկոյեան ժամը 7:00-ին: Համերգին ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը, Ազգ. վարչութեան, Պատկան Մարմինի, միութիւններու ներկայացուցիչներ եւ արուեստասէր հայ եւ օտար հանրութիւն: Երգչախումբը, ղեկավարութեամբ Գայիանէ Սիմոնեան-Տերեանի եւ դաշնամուրի ընկերակցութեամբ Լիզէթ Սերայտարեան-Արմենեանի, ներկայացուց ամանորեան, հայրենասիրական եւ ժողովրդական հայկական եւ օտար երգեր: Երգչախումբի անդամներուն ջերմ ու ներդաշնակ երգեցողութիւնը հանդիսականներուն տօնական օրերու յոյս եւ ուրախութիւն ներշնչեց: Պատերազմի ամենէն դժան դեպքերուն ակախատեալ եղած այդ շրջանը տարիներ վերջ խաղաղութիւն եւ սէր կը բուրբեր: Աւարտին, Բերիոյ Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեան իր սրտին խօսքը ուղղելով իր ուրախութիւնն ու հպարտութիւնը յայտնեց այս ելոյթին առիթով, «Չուարթնոց»-ականները նմանցնելով այն հրեշտակներուն, որոնք Զրիստոսի ծնունդը աւետեցին ու յոյս ներշնչեցին մարդկութեան: Սրբագան հայրը ըսաւ, որ այս վայրին մէջ տարիներ առաջ ահաբեկիչներ մահ ու աներ տարածեցին, մենք յոյսին, խաղաղութեան եւ վերականգնումին սատարելով կը մասնակցինք այս տօնական ձեռնարկներուն, մարտնչելով որ Սուրբիան մօտ օրէն վերագտնէ իր երբեմնի պայծառ օրերն ու վերածաղկի, իսկ Սուրբիոյ բնակչութիւնը յաղթահարէ այս դժուար օրերը:



Ուրախալի երեւոյթ էր այս նախաձեռնութիւնը, որ Հայկաի ժողովուրդին հաճելի պահեր հրամցնելու կողքին ներկայացուց մշակոյթ, արուեստ եւ մարդկային արժեքներ:

ՏԽՈՒՐ ԵՒ ՆՈՅՆՔԱՆ ԱԼ՝ ԾԱՆՐ



Գեորգ Պետիկյան

«Կը նահանջեն ծնողը, որդի, քեռի, փեսայ, կը նահանջեն բարը, ըմբռնում, բարոյական, սեր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կը նահանջենք բանի ու գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. մեղայ՛, մեղայ՛ Արարատին»: Ծահան Ծահնոր

Լաւ որոշում էր, որ առողջ սովորութեան մը վերածուելով դարձաւ աւանդական: Այսպէս, տարիներ առաջ, երբ այս երկրին մէջ երեք եղբայրներով հազիւ տուն տեղ եղած էինք, պայմաններու բերումով իրարմէ կը բաժնուէինք ու ամէն մէկս տարբեր նահանգէ ներս կը շարունակէինք մեր կեանքը:

Դարձեալ հայը դարձած էր ցիրուցան: Այդ օրերուն, սակայն, երեքով որոշած էինք գէթ քանի մը տարին անգամ մը, օրերու համարանքով, մեծով-պոստիկով իրարու քով գալ, իրարու հետ ըլլալ ու այդ ձեւով իրարու կարօտ «ամնել»:

Այդպէս ալ ըրինք: Նախ օրերով հանդիպման թուականը կը ճշդէինք եւ ապա տեղը-նահանգը քաղաքը-վայրը-պանդոկը կ'որոշէինք: Անգիր համաձայնութիւն: Ու այսպէս, ամէն անգամ ճշդուած արձակուրդին՝ ամէն մէկս իր ընտանիքով, համաձայնուած քաղաքին պանդոկներէն մէկուն մէջ կը մեկտեղուէինք ու կարօտի մեր զգացումներուն քիչ մը յուշ, քիչ մը ալ ապրում խառնելով կը վատնէինք մեր ժամերը:

Յետաքրքրականը, առաջին ժամերու տեսարանն էր: Չիրար համբուրել, գրկել եւ գրկուիլ: Կարօտ առնել:

Աչքերնիս ակամայ կը խոնակար ու երբ մենք մեզ գսպած կ'ըլլայինք, կը սկսէինք մեր իրարայաջորդող անհատնում հարցումները: Կեանք ու կարօտ բնորոշող խօսակցութիւն ու մանաւանդ բոլորին հաշուոյն երանելի պահեր: Յուշերու անհատնում շարան: Անհատնում խօսակցութեան հիւսք, առանց անդրադառնալու, որ յաջորդ հանդիպման անգիտակցաբար նոյն յուշերը պիտի գային դարձեալ կրկնուելու մեր մտքերուն մէջ ու դարձեալ մեր մթնոլորտը շերմացնելու իրենց նոյն շարքով եւ նոյն ուժգնութեամբ: Բացայայտ էր, որ մեր միջեւ, այդ վայրկեանին, կարօտէն անդին ուրիշ բան մըն ալ կար: Մեզ գիրար կապող անյայտ ներկայութեամբ բան մը:

Տարուէ տարի, մեզի հետ մեծցող մեր զաւակներն ալ սկսած էին մօտէն հետեւիլ հայերէնով մեր խօսակցութիւններուն: Կեանքը գիրենք ալ հասնուցած էր, միաժամանակ մեր ներքին հպարտանքին տալով տարբեր կշիռք եւ չափ:

Յապա՞ տեքը... տարիներ վերջ... իսկ հիմա՞... երբ այլեւս իրենց խաղալիքները «կըզը Ֆըրլէտ»-ներով կամ «պոյ Ֆըրլէտ»-ներով փոխարինուած էին, իրենց հետաքրքրութիւններն ալ ինքնաբերաբար շեղած ըլլալով, մեզ նետած էին նոր մթնոլորտի մը գիրկը:

Որովհետեւ... մեր զաւակները մեծցած էին: Կը զգայինք այս մէկը ու անոր գիտակցութեամբ կ'ապրէինք:

Մարդիկ միշտ փոքր պիտի չմնային: Երանի թէ փոքր մնային. գոնէ իրենց հոգերն ու ցաւերն ալ փոքր կը մնային: Քանի մեր փոքրերը կը մեծնային ու հասակ կը նետէին, իրենց հետ կը մեծնային ու կը բազմանային նաեւ մեր մտահոգութիւնները:

Այսպէ՛ս կը դատէին մեր մտքերը: Այսպէ՛ս կը չափէին մեր տրամաբանութիւնները:

Տարիներու ընթացքին մեր եւ իրենց միջեւ հաղորդակցական լեզուն ինքնաբերաբար փոխուած էր: Յայերէնը, շատ յաճախ նահանջելով, իր տեղը տուած էր անգլերէնին: Որքան ալ փորձէինք սրբագրել, մեր զաւակներուն հարցումներուն մեր մայրենի լեզունով պատասխանել, ակամայ կը հասնէինք անելի մը առջեւ, որուն ներկայութիւնը անգլերէն լեզունով միայն կը հարթուէր:



Այսպէս է Ամերիկայի կեանքը: Զէինք գիտեր: Երբ նոր հաստատուած էինք այս երկիր, մեր օրերը, տեղացի հայերը այսպէս ելուկ կ'անցնէին: Ու հիմա, երբ մենք ալ «նոյն բաժակէն եւ նոյն ջուրէն խմելու» ակամայ առիթն ու պատեհութիւնը կ'ունենայինք, այս անգամ լռելեայն մենք մեզ կ'այսպէսէինք:

Է՛հ... մեր «դարը» ուրիշ էր: Իրենցը՝ ուրիշ: Յիմա պահանջներն ալ ուրիշ էին:

Ու այսպէս ամէն մեր հաւաքներուն նկատելի էր հայերէն լեզուի նահանջը մեր մեծ ու փոքր հարազատներուն, թոռներուն, հարսերուն եւ փեսաներուն բերաններէն: Յայերէնը սկսած էր կորուիլ, գրեթէ ցնդած: Բոլորս ալ ակամայ ինկած էինք սփիւռքեան ճակատագրին մէջ: Յաւալի իրողութիւն:

Արդէն Ամերիկան իր կաթսային մէջ ձուլած է մարդկային բոլոր հոսանքները եւ կազմած է նոր մտայնութիւն, մեզի համար խորթ եւ անընդունելի: Բոլորիս զաւակներն ու թոռները պայմաններու բերումով, դժբախտաբար, հեռու էին հայութեան ամբօրեայ տրոփումներէն:

Շատ ճիգ թափած էինք: Բայց ապարդիւն: Յոսանքը մեծ էր եւ...:

Յայտնի է, թէ աշխարհը, ուր կ'ապրինք, դարձած է վայր մը, ուր օտարացման գերանդին մեծաթիւ գոհեր «կը հնձէ» մեր շարքերէն: Այդ գերանդին հասած է նաեւ մեր տունները:

Յանկարծ կ'անդրադառնաս, որ այս ընթացքով, այս երկրին մէջ, օր մը հայը անճանաչելի «բան» մը կրնայ դառնալ:

Բայց չէ՞ որ մեր ժողովուրդի հոգիէն բխող մեր լեզուն կենդանի է եւ հիւթեղ: Ո՞ր մնաց այս վարկածը: Լեզուն մարդու ապրելու եւ գոյատեւելու գաղտնիքն է ամէնէն յատկանշական բանալիներէն մէկն է: Այո՛, ճիշդ է... բայց հոս... արդէն մոռցուած է:

Ու մենք, մեր զաւակներն ու յատկապէս այս օրերուն մեր թոռները կորսնցուցած մօր մը նման յաճախ «հայութիւն» կը գոռանք: Այս իրականութեան դիմաց նոյնիսկ կը սարսափինք, որովհետեւ ապականուած է մեր շրջապատը եւ այս ընթացքով անկասկած վաղուան մեր ինքնութիւնը պիտի մաշի: Սարսափելի է այս իրականութիւնը:

Ու տարուէ տարի, մեր իւրաքանչիւր նման հանդիպումէ ետք, շրթներս պիտի բռնած, յօնքերս կիտած, դէմքս գունաթափ եւ յուսախաբ, չէի կրնար ընդունիլ այս տխուր ու նոյնքան ծանր ճշմարտութիւն-իրականութիւնը:

Ո՞վ եւ ե՞րբ յատկապէս այս օրերուն մեր թոռներուն եւ անոնց նմաններուն պիտի սորվեցներ «պաշտպանել» մեր մայրենին, որպէսզի մեր երթը շարունակուէր: Մենք իբրեւ մեծ հայր կամ մեծ մայր, պապիկ կամ նանի, մեր իրաւատութիւնները սահմանուած էին: Մեզ մէ առաջ միշտ թոռնիկն ծնողքը կար...:

Նման իրականութեան դիմաց միշտ դեմքիս վրայ ծանր ստուերներ կը նստէին: Տխուր: Յատկապէս մեր թոռները, որոնք անմեղ գոհերը դարձած էին այս երկրին, եւ ներկայ դարուս պայմաններուն: Չգացումներու խաբկանք մը կար մէջս: Չսպուած եւ վտանգաւոր: Աչքերուն մէջ ինքնածին տեսիլներս ամրացած էին: Յուսախաբութեւն աւելի ինքնախաբէութեան դիմաց կանգնած էի կարծես: Կը հաւատայի, որ Ամերիկայի մէջ դէպքերն են, որոնք կը վազեն ճակատագրին ետեւէն: Ո՞ր մնացած էր մեր ազգային եութեան ճանաչումը: Մէկ խօսքով՝ մեր ինքնաճանաչումը: Ու այս բոլորին յանցաւորը մենք էինք, ծնողք եւ մեծ ծնողք, դպրոց կամ ակումբ, կեդրոն, դաստիարակ կամ ինսամակալ: Բայց անպայման, այս բոլորէն առաջ՝ ծնողք:

Ու յաճախ կը մտածեմ, որ խեղճ հայրս իր այնքան հոգերուն մէջ, երբեք, նոյնիսկ վայրկեան մը իսկ չէր տագնապած մեր ինքնութեան, մեր հայու կերպարին պահպանման համար: Իրեն համար մենք երբեք մանչեղով՝ միշտ այդպէս իր գիտցած հայերը պիտի մնայինք ու մեծնայինք, եւ մեզի հետ պիտի շարունակուէին մեր ընտանեկան սովորութիւններն ու աւանդութիւնները:

Որովհետեւ հայրս կը հաւատար, որ Միջին Արեւելքի մեր ապրած օրերուն իր «ցանած» սերմը հայկական արմատներ ունէր...: Ակումբը, եկեղեցին, մեր յաճախած վարժարանները, մեկական ամրոցներ շինած էին իր զաւակներուն հոգիներուն ու մտքերուն մէջ: Յայկականութեան ամրոցներ:

Ու այս օրերուն, անկեղծօրէն ինծի համար ծնողներս այն երջանկներէն էին, որոնց զաւակները իրենց նման մեծցան ու...: Յապա հիմա՞: Յապա՞ հարսերն ու փեսաները... հապա՞ թոռները...:

Ու կր հաւատայի, որ «տոմիկոյի» քարերու նման իրարու ետեւէ շարուած էին այս մտածումները եւ այն վայրկեանին, երբ քար մը ինչորեւէ ետեւ-ետեւի փուլ պիտի գային մեր բոլոր շարած քարերը, մեր յոյսերը, հայրս մեր հպարտանքը:

Տխուր իրականութիւն մըն էր խորքին մէջ այս պատկերը, որ երբեմն մտքիս ծայրէն կը սահէր ու գիս վախազդու եւ նոր մտմտուքի մը մէջ կը նետէր:

Անոր համար, ամէն օր սկսած էի գաղտնօրէն ծնողքիս նախանձի:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

Խոյ
Հաճելի անակնկալներով լի շաբաթ մը պիտի ունենաք: Ձեր բոլոր խընդիրները պիտի լուծուին եւ կարելոր մարդոց հետ յարաբերութիւնները պիտի բարելաւուին:

Ցուլ
Նոր դաշնակիցներ գտնելով արդիւնաւետ գործեր պիտի կատարէք եւ ձեր հարազատներուն հետ խաղաղ յարաբերութիւններ պիտի մշակէք:

Երկուորեակ
Ձեր գործերը յաջող լուծումներով պիտի աւարտին: Խուսափեցէ՛ք վեճերէն եւ լաւ յարաբերութիւնները պահեցէ՛ք դիրագրգիւ մարդոց հետ:

Խեցգետին
Լարուած վիճակներ պիտի ունենաք: Ձեր զգացումները վերահսկողութեան տակ պահեցէ՛ք: Խնայողութեամբ ապրեցէ՛ք, որպէսզի չզոհաք:

Առիւծ
Ձեր մասնագիտութեան նկատմամբ հետաքրքրութիւն ցուցաբերեցէ՛ք, որպէսզի յաջողիք: Շատ մի՛ կեդրոնանաք ձեր տնային գործերուն վրայ: Խուսափեցէ՛ք ծանրաբեռնուածութենէն:

Կոյս
Մարդիկ ձեր տաղանդն ու շնորհները կ'օգտագործեն իրենց շահերուն համար: Նոր համաձայնութիւն մը պիտի կնքէք եւ ընդհանուր լեզու գտնէք ձեր շրջապատին հետ:

Կշիռք
Անսպասելի նուէր մը պիտի ստանաք սիրելի անձէ մը: Հաճելի մարդոց հետ պիտի ծանօթանաք, որոնք պիտի գնահատեն ձեր գործերը:

Կարիճ
Դուք կը ձգտիք հասնիլ ձեր նպատակներուն՝ առանց ժամանակ վատնելու: Ձեր կեանքը պիտի դառնայ աւելի պարզ, հանգիստ եւ հասկնալի:

Աղեղնաւոր
Այս շաբաթ գործնական հանդիպումներ պիտի ունենաք ձեռնարկի մը ընթացքին նոր մարդոց հետ: Հարազատներով հաճելի ճամբորդութիւն մըն ալ պիտի ունենաք:

Այծեղջիւր
Անհրաժեշտ է, որ ձեր նախկին փորձերէն օգտուիք եւ զգուշութիւն ցուցաբերէք ճիշդ որոշումներ կայացնելու համար: Յաջողութեան հասնելու համար դաշնակիցներու կարիք ունիք:

Ձրիս
Անսպասելի միջոցառման հրաւեր պիտի ստանաք: Մի՛ մերժէք զայն եւ լաւ ժամանակ պիտի անցընէք: Հին ընկերներու աջակցութեան դիմեցէ՛ք, որոնք չեն դաւաճաներ ձեզ:

Ձուկ
Շաբաթը յարմար է բարեկամներու հետ հանդիպելու համար: Հաճելի յուշերը ձեր տրամադրութիւնը պիտի բարձրացնեն:



ԻՆՉՊԵ՛Ս ՕԳՆԵԼ ՁԵՐ ՉԱԿԻՆ ՅԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ԻՐ ՁԱԽՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մանուկներու թէ պատանիներու կեանքի անյաջողութիւններու կամ ճախողութիւններու պահերուն, ծնողներուն սերն ու գուրգուրանքը պատանիներուն ինքնավստահութիւնը կը զարգացնեն: Երեխային աճման շրջանին անհրաժեշտ է գիտակցիլ, որ պատանեկութեան տարիները երեխայի կեանքին ամենակարեւոր տարիներն են:

Այս ժամանակահատուածին է, որ պետք է նրբութեամբ վարուիլ անոր հետ: Պատանեկութեան տարիներուն անոնք կրնան այլազան ճախողութիւններու հանդիպիլ՝ դժարոցի, ակումբի, յարաբերութիւններու կամ որեւէ այլ ոլորտի մէջ:



Նման պարագաներու, ծնողները պետք է աջակցին եւ օգնեն անոր, որպէսզի կարենայ յաղթահարել ճախողութիւնը:

Հարկ է նման պարագաներու նկատի առնել քանի մը կարեւոր խորհուրդ.

Առաջին քայլը, զինք խրախուսելն է:

Ուշադրութեամբ լսեցէ՛ք ձեր երեխային եւ թոյլ տուէ՛ք անոր ըմբռնել, որ առանձին չէ, եւ դուք իրեն պիտի աջակցիք անպայման:

Ժամանակ յատկացուցէ՛ք ձեր երեխաներուն լսելու: Եթէ անոնց կեանքին մէջ որեւէ հետընթաց նկատէք (օրինակ, եթէ քննութեան ցած գնահատանիչ ապահոված ըլլայ ան), ժամանակ յատկացուցէ՛ք, լսեցէ՛ք եւ աջակցութիւն առաջարկեցէ՛ք անոր:

Նոյնիսկ եթէ ձեր գաւակը դեռ մտադիր չէ խօսելու եւ իր զգացումները յայտնելու, պարզապէս անոր կողքին եղէ՛ք եւ կարեկցանք ցոյց տուէ՛ք:

Ճախողութիւնը երբեք աղետի մի՛ վերածեք: Եթէ ձեր գաւակը այդպէս մտածէ, ինքնավստահութիւնն ու համարձակութիւնը կը պակսին, ուստի համոզեցէ՛ք զինք որ ճախողութիւնը բնական է եւ աշխատելու պարագային կրնայ յաջողութեան առաջնորդել կրկին:

Բացատրեցէ՛ք անոր, որ ճախողութիւնը կըրնայ կեանքի դասի վերածուիլ: Կարեւորը ոչ թէ այն է, թէ ի՞նչ պատահեցաւ, այլ այն, թէ ի՞նչ կըրնաք սորվիլ պատահածէն:

Ձեր գաւակին հասկցուցէ՛ք, որ անյաջողութիւնը իւրաքանչիւր մարդու կեանքին մէկ մասն է եւ անհրաժեշտ է անոր զարգացումին համար:

Եղէ՛ք կարեկից, բայց նաեւ յիշեցէ՛ք, որ հիմնորով կարելի է մեղմացնել ձեր գաւակին զայրոյթը:

Մեղմացուցէ՛ք մթնոլորտը, որպէսզի ձեր գաւակը կարենայ յաղթահարել տխրութեան եւ հիասթափութեան զգացումները եւ սորվի յաղթահարել ճախողութիւնը:

Անոր ուշադրութիւնը ցրել փորձեցէ՛ք, զինք մղելով իրեն հաճելի համարուող աշխատանքներու:

Օգնեցէ՛ք անոր, որպէսզի կարենայ հանգըստանալ, զուարճանալ եւ դիւրութեամբ յաղթահարել ճախողութիւնը:

Երբեք մի՛ նախատեք զինք իր ճախողութեան պարագային:

Անպատշաճ կամ կոշտ խօսքը կրնայ ճշել ձեր գաւակին հոգեկան աշխարհին վրայ, եւ մղել զինք որ հետագային անկեղծօրէն ձեզի չյայտնէ իր ճախողութեան ու անոր պատճառներուն մասին:

Փորձեցէ՛ք անոր տալ այնպիսի խորհուրդներ, որոնք կ'օգնեն ինքնավստահ քայլերով ուղղուելու յաջողութեան:

Շաբթուան Միտքը

Եթէ մանուկը չի հասկնար ձեր դասաւանդութիւնը, յանցանքը ձերն է, որովհետեւ չէք կրցած հասկնալ անոր հոգին. պետք է վար իջնել մինչեւ անոր հոգեկան աստիճանը, եւ զայն առնելով ձեզի հետ բարձրացնել:

Ընտանիքը որքան զարգացած ըլլայ, մանուկն ալ այնքան միտքի առաւելութիւններով երեւան կու գայ:

Հայ ժողովուրդի գաւակներ, դուք կարողացէ՛ք Մովսէս Խորենացի, Եղիշէ, Նարեկացի, Խաչատուր Աբովեան, Բաճճի, Ալիշան, Պէշիկթաշեան եւ տեսէք, թէ ո՛վ ենք մենք:

Կոմիտաս



Ռաֆֆի Սիկսիան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Հալեպի ալ-Ահլի-ի թափափափ ապագեթի խումբի արժանիների մարզիչ Փեթրաչին դադարեցնել է ետը, կազմին նոր մարզիչ նշանակեց լիբանանցի մասնագետ Ղասան Սարգիս, որ տարիներ առաջ մարզած էր Ահլին:



- Արեւմտեան Ասիոյ պապեթի ապագեթի մրցումներու շրջագիծին մէջ, Դամասկոսի մէջ Զարամեն 89 - 67 արդիւնքով պարտութեան մատուցեցաւ Լիբանանէն ժամանած ալ-Ռիյատի խումբին դէմ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՏԻՏԻԷ ՏԵՇԱՄՓ ԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿԱՐԱԶԳԵՑ

Շաբաթ օր, Ֆրանսայի ֆութպոլի Դաշնութիւնը պաշտօնապէս յայտարարեց, թէ ֆութպոլի խումբի մարզիչ Տիտիէ Տեշամփ պիտի շարունակէ իր պաշտօնը մինչեւ 2026: Դաշնութիւնը պաշտօնական կայքէջին մէջ յիշեց, որ Տեշամփի հետ պիտի շարունակէ նաեւ իր օգնականը ճած Սթիվընը, դարպասապահերու մարզիչ Ֆրանք Ռաֆիօթը եւ մարմնամարզի պատասխանատու Սիրըլ Մոյնը: Նշենք, որ Տեշամփ Ֆրանսայի հաւաքականին հետ տիրացաւ 2018-ի համաշխարհային ախոյեանութեան, 2021-ին Եւրոպայի ախոյեանութեան: Շաբաթներ առաջ, 2022-ի համաշխարհային ֆութպոլի ախոյեանութեան աւարտականին, ան պարտութեան մատուցեցաւ Արժանիներն եւ գրաւեց երկրորդ դիրքը:



ՍԵԱԼՈՆԻ ԱԵՆԱՐԻԼԻ ԼԱՐԱԳՈՅՆ ՄԱՐԶԻՉ ԸՆՏՐՈՒԵՑԱՐ

Միջազգային ֆութպոլի կազմակերպութեան պատմական բաժնի յատուկ յանձնախումբը 2022-ի տարուան լաւագոյն մարզիչ ընտրեց Արժանիների հաւաքականի մարզիչ Լիոնել Սքալոնին: Ըստ ՖԻՖԱ-ի կայքէջին, Սքալոնի 240 կետ ապահովելով գրաւեց առաջին դիրքը, 195 կետերու տարբերութեամբ իրեն յաջորդեց Ֆրանսայի հաւաքականի մարզիչ Տիտիէ Տեշամփը: Երրորդ տեղը գրաւեց մարոքցի մարզիչ Ուալիտ Ռաքնաքի, ապահովելով 30 կետ: Աւելցնենք, որ 43-ամեայ մարզիչը Արժանիների հետ տիրացաւ 2022-ի համաշխարհային ֆութպոլի ախոյեանութեան:



ԶԻՏԱՆԸ ԵՐԵՔ ՀԱՄԱԶԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԱՐԶԻՉՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿԸ ՄԵՐԺԱԾ Է

Սպանիոյ Ռեալ Մատրիտի նախկին գլխավոր մարզիչ Զենատտին Զիտան ստացած է առաջարկներ մարզելու Պրագիլի, Փորթուկալի եւ Ամերիկայի հաւաքականները, բայց ան մերժած է բոլոր առաջարկները: Ֆրանսական L'Equipe-ը յիշեց, որ Ֆրանսացի մասնագետը յոյս ունէր փոխարինելու Տիտիէ Տեշամփը, սակայն Ֆրանսայի Դաշնութիւնը երկարաձգելով անոր պայմանագրութիւնը զինք հեռու պիտի պահէ նաեւ իր երկրի կազմէն: Աւելցնենք, որ Զիտանի գլխավորութեամբ Ռեալ Մատրիտ արժանացած է բազմաթիւ տիտղոսներու:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 422)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- Մերժում: Մարտողութիւնը դիւրացնելու համար մաղձ արտադրող գործարան:
- Յարաբերական դերանուն: Հակառակ՝ ճառագայթ: Իգական անուն:
- Հակառակ՝ շղկապ: Ձայն, շէտ: Իրերայաջորդ տառեր:
- 1040: Խառնատառ՝ կրակ: Քէն:
- Անսուսի մորթէ պարկ: Տարուան եղանակներն (հոլովուած ձեւով):
- Գամ: Հակառակ՝ բարակ չուան:
- Վանայ լիճի կղզիներէն:
- Նիզակ: Սրբուհի մը:
- Աստուածային: Զսիրել:
- Կրկնուած բաղաձայններ:
- Արցախի մայրաքաղաքը:
- Մինչեւ ի մահ: Հակառակ՝ տարածքի միաւոր:


Ուղղահայեաց

- Խակ, տիաս: Այն առաքեալը, որուն Զրիստոս «Ժայռ» կոչեց:
 - Սեգ, հպարտ: Ձայնաւոր տառեր: Տառի մը հարեանները:
 - Հակառակ՝ ձայնակիչ: Հակառակ՝ 403: Եական բայ:
 - Հարթել, շտկել: Հայաստանի գետերէն:
 - Հակառակ՝ հնազանդ: Սեղմ: Սարսափ:
 - Մառախուղ: Սիւսմանթոյի ծննդավայրը:
 - Հակառակ՝ յարաբերական դերանուն: Անկարող:
 - Հակառակ՝ ուրիշ: Կրկնուած ձայնաւորներ: Հակառակ՝ աղբիւր:
 - Վահան Փափագեանի ծածկանունը: Հակառակ՝ անձնական դերանուն:
 - Եւս: Բացուածք, որմածերպ: Տառի մը անունը:
 - Հակառակ՝ դպրութեան աստուածը: Հակառակ՝ տառի մը անունը:
- Միացող ածուխ:
- Որոգայթ լարող:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 421)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ն	ո	ր	հ	ա	գ	ի	ր	ա	մ		
2	ի	շ	խ	ա	ն	ր	ո	մ	ի			
3	ր	մ	ա	հ		ֆ	ա		ա	ք		
4	վ	ա	կ	ա	ս	պ	ա	յ	ք	ա	ր	
5	ա	ր	ա	ր		խ	ա	ն	ա	ս	ո	ր
6	ն		լ	ի	մ	ո	ն	ր	ս			
7	գ	ի	ս	ե	ր	ա	յ	ի	ն	ի		
8	ա	ր	ա		ծ	ա	կ	ր	կ	ա		
9	դ	ա	ր	մ	ա	ն	ա	մ	ա	կ		
10	ե	տ	կ	ա	ր	ա	կ	ն	ո	ն	ի	
11	ե	դ	ծ	ե	լ	ա	ւ	ո	ւ	ր		
12	ե	ս		լ	ա	կ	կ	ո	ճ			

ԼՈՒՐԻՆ



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ
ՊԱՏԱՐԱԳՈՎ ԲՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆՂԵԱՆ ԵՒ
ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ՅԻՇԱՏԱՎՈՒԷՆԱՒ

Ուրբաթ, 6 Յունուար 2023-ի առաւօտուն, մեր Տիրոջ Եւ Փրկչին Յիսուս Բրիստոսի Սուրբ Ծննդեան Եւ Աստուածայայտութեան տօնին առիթով հանդիսաւոր Սուրբ Եւ Ամահ Պատարագ մատուցուեցաւ Բերիոյ Յայոց Թեմի եկեղեցիներէն Ներս:

Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագ մատուցեց



Սրբոց Բառասկից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ Եւ Սուրբ Ծննդեան իր պատգամը ուղղեց ժողովուրդին:

Պատարագին Ներկայ էին՝ ՀՀ Յալէպի գլխաւոր հիւպատոսութեան խորհրդական, հիւպատոս մեծարգոյ Բարգէն Պատալեան, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխաններ Ժիրայր Ռէիսեան Եւ իրաւաբան Լիւսի Իսկէնեան, Բերիոյ Յայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովի, Ազգային Վարչութեան Եւ Կրօնական Ժողովի անդամներ, ինչպէս նաեւ հալէպահայ կազմակերպութիւններու, մշակութային, մարզական Եւ բարեսիրական միութիւններու Եւ հաստատութիւններու Ներկայացուցիչներ Եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն:

Դպրաց դասի «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ Եւ



հանդիսաւոր թափօրով Առաջնորդ Սրբազան Յայրը մուտք գործեց եկեղեցի, ուր դիմաւորուեցաւ ՀՍԸՄ-ի տարազաւոր սկաւառներով:

Ս. Պատարագին հոգեպարար երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ դպրաց դասը, հոգեկան ցնծութիւն Եւ անդորրութիւն պարգեւելով Ներկաներուն:

Պատարագի առընթերականներն էին Արժ. Տ. Նարեկ Ա. Քնյ. Չերենցեան Եւ Արժ. Տ. Գառնիկ քնյ. Չափանեան: Յընթացս Սուրբ Պատարագին,



Բրիստոսի մկրտութիւնը խորհրդանշող ջրօրինեցի արարողութիւն կատարուեցաւ: Սրբազան հայրը սուրբ Խաչով, սուրբ Աւետարանով Եւ սըրբալոյս Միւռնով օրհնեց ջուրը: Կընքահայրն էր Գրիգոր Փայասեան, որ Ս. Խաչը շալկած մասնակցեցաւ արարողութեան:

Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազան Յայրը, Ս. Ծննդեան իր պատգամը ուղղեց եկեղեցւոյ մէջ Ներկայ գտնուող ժողովուրդին Եւ «Ռատիօ Երագ»-ի առցանց սըրբալոյս ճամբով Պատարագին հետեւող ժողովուրդի գաւակներուն:

«Խորհուրդ մեծ» Ս. Ծննդեան շարականը բնաբան ունենալով, սրբազան հայրը բնութագրեց Ս. Ծննդեան հրաշալի տօնը ըսելով. «Խորհուրդ մեծ Եւ սքանչելի է իրօք այսօր, Եւ մեր Տիրոջ Եւ Փրկչին Յի-

սուսի Բրիստոսի Աստուածայայտութեան Եւ Ծննդեան տօնն է: Մանկացեալ Յիսուսը մեր սրտերուն մէջ ընդունելու հրաշալի տօնն է, այլ խօսքով՝ աստուածային սերը, աստուածային խաղաղութիւնը, աստուածային լոյսը, յոյսը Եւ կեանքը մեր մէջ ընդունելու Եւ անով կենսաւորուելու տօնն է այսօր»: Ապա աւելցնելով ըսաւ. «Այսօր աստուածային գերագոյն Եւ անսահման սիրոյն մարմնաւորման տօնն է, այն լոյսը որ երկնքէն կը շողայ Եւ մեր մտքի, սրտի Եւ հոգիի խորհուրդներուն, կամքին, ապրումներուն, մտածումներուն Եւ ողջ էութեան կանխեղին մէջ ծառայայթելով՝ մեզ դէպի աստուածային գիտութիւն, աս-

տուածայաշտութիւն Եւ Աստուծոյ երկրպագելու կ'առաջնորդէ»: Ան հրաւիրեց ժողովուրդի գաւակները,

որպէսզի մոգերուն նման որպէս լաւագոյն Նուէր իրենց սրտերը բանան մանկացեալ Բրիստոսին առջեւ:



Սրբազան հայրը շնորհաւորեց ժողովուրդի գաւակները՝ Ամանորի Եւ մեր Տիրոջ Եւ Փրկչին Յիսուս Բրիստոսի Ս. Ծննդեան Եւ Աստուածայայտութեան տօններուն առիթով, աղօթելով, որ այս տօնին խորհուրդով կերպարանափոխուած՝ Նոր էջ բանան իրենց կեանքին մէջ Եւ ապրին, գործեն Եւ ստեղծագործեն Աստուծոյ փառքին, մեր եկեղեցւոյ պայծառացման Եւ մեր ազգի փառքին համար:

Մակար սրբազան մաղթեց, որ Խաղաղութեան Իշխանը, Կեանքի Պարգեւիչը Եւ Արդարութեան Արեգակը իր կենդանի ներ-



կայութեամբ հովանի ըլլայ մեր հայրենիքին՝ Հայաստանին, Արցախին,



ծննդավայրին՝ Սուրիոյ, օրհնէ ու պաշտպանէ Սուրիոյ վեմաշուք Նախագահը, սուրիական բանակը, պետութեան ղեկավարները, ինչ-

պէս նաեւ օրհնէ, իմաստութեամբ Եւ եղբայրասիրութեամբ լեցնէ ազգային իշխանութեան, ազգային վարչութեան, կրօնական ժողովի, մեր կազմակերպութիւններուն, ազգային մարմիններուն, միութիւններուն Եւ յանձնախումբերուն մէջ ծառայող անդամները:

Այնուհետեւ, դպրաց դասը Ս.

Ծննդեան հոգեթով շարականներ երգեց, որուն ընթացքին սրբազան հայրը ընդունեց ժողովուրդի գաւակներուն շնորհաւորութիւնները Եւ

օրհնեց գանուք: Որմէ ետք, Մակար սրբազան թափօրով ուղղուեցաւ դէպի Ազգ. Առաջնորդարան, ուր

պետական, ապահովական Եւ կրօնական բարձրաստիճան պատասխանատուներու, քոյր յարանուանութիւններու հոգեւոր պետերու, հայ Եւ արաբ կուսակցութիւններու, մշակութային, մարզական Եւ բարեսիրական միութիւններու, եկեղեցիներու թաղական խորհուրդներու, ղրպրաց դասերու Եւ հաւատացեալներու Սուրբ Ծննդեան տօնի շնորհաւորութիւնները ընդունեց:

Բրիստոս ծնաւ Եւ յայտնեցաւ. Օրհնեալ է յայտնութիւնն Բրիստոսի: Ձեզի, մեզի մեծ Աւետիս:

Մարինա Պողիկեան